



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


4502



83
84-93



208161
POLLUS



2 NOV 2009

800
6-93
պ.

ԵՐԵՎԱՆԻ ԿՆՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ՀԱՅՐԵՆԱՍԷՐ ԻՏԱԼԱՅԻՆ

1002
5425

(Արտատու. „Մ Ո Ւ Ր Ժ“ անասպրեց)




ԳԵՐՄ. ԹԱՐԳՄ.

Լ. ԲԱՅԱՅԵԱՆ



1904



1. ... ենց սալօնը թէն մեծ չէ, բայց
 զեղեցիկ և յուրք ճաշակով էաճառ-
 րուած է: Ձենն ալ սալօնի տարութիւ-
 նը չափաւոր է և նրա առատագից կա-
 խուած զեղեցկաձև ճրագը փառաւոր
 լոյս է տարածում սալօնի ամբողջ տա-
 րածութեան մէջ, որ շատ է նպաստում
 նրա մէջ հիւր եղող մարդկանց ուրախ
 և անվերջ խօսակցութեանը, քան թէ
 ուրիշ ճրագների սաստիկ և վնասակար
 լուսաւորութիւնը:

Մենք գտնուում էինք այդ միւսնոյն սա-
 լօնում, և մեր ընկերական շրջանը բաղ-
 կացած էր 8—10 ուրախ անդամներից,
 որոնց մեծ մասը պատկանում էր իգա-
 կան սեռին: Մենք փառաւոր կերպով

կանց վրայ հայրենասիրութիւնը:

— Իսկ ինչ ինձ է վերաբերում, ասաց մի դօկտօր, որ շատ էր սիրում այդպիսի շրջաններում Սրբառատելի փիլիսոփայութեան մասին մտածել և խօսել, ես կարծում եմ, որ այդպիսիական և ցեղական առանձնայատկութիւնների վրայ պ' աչ է մեծ ուշադրութիւն դարձնել: Սառնասիրտ հիւսիսարնակը հայրենիքի վերացական գազափարով աւելի շատ է սգեւորում, քան տաքարիւն հարաւարնակը, որ աւելի՛ գուտ մտից և արիւնից բազկացած արարածի համար է սգեւորում: Ընդկացին սերոյ համար խինա ծառի՝ միայն բնիկներին յայտնի գաղտնիքը մատնեց իսպանական նա յանգապետի հիւանդ ազգիան, և զրանով նպաստեց տենդի ոյժը ոչնչացնելու, որ մի և նոյն էր, թէ Ամերիկան ազատեց օտար ճնշողներից. բայց այդ հնդկացին հարաւարնակ էր և աւելի բնդունակ սիրելու, քան թէ հայրենասիրութեամբ բզբազուելու: Մի շվեդ կամ անգլիացի իր հայրենիքի համար աւելի շատ բան կը

դոհի, քան իր սիրուհու համար. բայց այդ բանը կասկածում եմ տակ մի իսպանացու կամ իտալացու մասին:

Սեր շրջանի աչքի բնկնող անձնաւորութիւնը տիկին Փօն Գ...ն էր: Նա մի չազ, չափազանց կանոնաւոր հագնուած և մօտ A() տարեկան կին էր: Նրա մագերը փայլուն և սև էին, դէմքի գծագրութիւնը և շրթունքները նուրբ, մնօտը լիքը, ուժեղ և կոյր: Այդ բոլոր նշանները խոկոյն մասնում էին, որ նա հարաւի տիպ էր: Եթէ նրա արտաքին տեսքն ու բնաւորութիւնն էլ չը լինէին, այդ կարելի էր եզրակացնել նրա արտասանութիւնից: Գերմաներէն խօսելու ժամանակ նա խոկոյն և եթ օտար երկրացի կնոջ տպաւորութիւն էր թողնում:

Տիկին Փօն Գ...ն մինչև այդ ժամանակ լուռ և ուշադրութեամբ լսում էր մեր խօսակցութիւնը: Գօկտօրի վերջին կարծիքը նրա շրթունքների վրայ ծիծաղ առաջացրեց և ստիպեց նրան մեր վիճարանութեանը մասնակցելու:

Պարոն դժկտօր, ինչ որ դուք ասա-
ցիք իտպանացիների և իտալացիների
մասին, նկատեց նա, ես չեմ կարող ձեր
կարծիքն անպայման կերպով ընդու-
նել: Եթէ թոյլ կտար, ես իմ կեանքից մի
կարճ միջազգայր կը պատմեմ, որից դուք
կարող էք եզրակացնել, որ զանազան
հանգամանքներում իտալացու վրայ էլ
հայրենասիրութիւնը աւելի սաստիկ է
ներգործում, քան թէ սէրը:

Նրա տրամադրութիւնից կարելի էր
խտոյն ենթադրել, որ այդ միջազգայրը
բոլորիս համար էլ հետաքրքրական
պէտքէ լինէր:

— Դուք գիտէք, որ ես միլանեցի եմ և
սրանից տասը տարի առաջ թողեցի
ծննդավայրս, և ամուսնուս կոչումն ինձ
այստեղ բերեց: Ես 18 տարեկան ազ-
ջիկ էի, երբ Լոմբարդո-Վենետիկեան
ապստամբութիւնը ճնշուեց: Մարշալ
Ռադեցկին յաղթական գօրքի գլուխն
անցած մտաւ Միլան: «Իտալիացի սուրբ»
արդէն կոտրւած էր և իւրաքանչիւր
հայրենասէր ստիպուած էր արիւնալի

սրտով իր յոյսերի իրականանալուց ձեռք
վերցնել: Օ՛հ, դուք շէք կարող այն ժամա-
նակուայ թշուառութեան և վշտի մասին
գաղափար կազմել, որովհետեւ այն ժա-
մանակը շէք սպրել: Մենք ամեն կող-
մից պաշարուած էինք և միշտ աշխա-
տում էինք խուսափել թշնամիներից,
որոնք դիտմամբ, տանջելու համար,
մեզ յիշեցնում էին մեր հայրենիքի
թշուառ դրութիւնը և աննախան-
ձելի վիճակը: Մենք թողեցինք մեր
սովորական գրօսանքները, որովհետեւ
աւստրիական սպաները ամեն քայա-
փոխում մեզ հետեւում էին: Իւրաքան-
չիւր ընտանիք բաւականանում էր մի-
այն իր սեփական շրջանով և ապրում
էր չորս պատերի մէջ փակուած: Դուք
հազիւ կարողանաք երեւակայել, թէ
այդ դրութիւնը մեզ՝ իտալացիներին,
որքան վիշտ և մեղամաղձութիւն էր
պատճառում:

Այդ սարսափելի ժամանակում ես ծա-
նօթացայ Ալբերտ ֆօն Վ...ի, որի հետ
ես յետոյ ամուսնացայ: Նա եղբօրս

ուսումնակիցը և մի և նոյն ժամանակ մի
 յայտնի ինժեներ էր: Այբերտը մի գե-
 ղեցիկ երիտասարդ և լաւ բնկեր էր,
 որի այցելութիւնները այն սարսափելի
 ժամանակում ինձ համար կրկնակի հա-
 ճելի էին: Ես արդէն նկատում էի, որ
 նա ինձանով հետաքրքրում է: Սկզբ-
 բում նա միշտ եղբօրս հետ էր ինձ
 մօտ գալիս և նրա հետ էլ գնում: Յետոյ
 նա մրաշնակ էր գալիս, բայց խնայն հե-
 ուանում, երբ նկատում էր, որ եղ-
 բայրս տանը չէր: Աերջապէս նա մեր
 մշտական հիւրը դարձաւ, և որովհետեւ
 նրա ծնոդներն էլ այդ այցելութիւննե-
 րին հակառակ չէին, զրա համար նա
 հետզհետէ սովորութիւն դարձրեց ինձ
 մօտ երկար մնալ և ինձ իր խելօք ու
 զրաւիշ խօսակցութեամբ հրապուրել:
 Մենք արդէն միմեանց շատ լաւ էինք
 ճանաչում և փոխադարձ վստահութիւն
 վայելում, երբ նա մի օր (նա կէսօրից
 յետոյ ինձ մօտ էր լինում, որովհետեւ
 մենք ընթերցանութեամբ էինք պարա-
 պում) ինձանից յանկարծ թոյլուութիւն

խնդրեց ծխելու:
 — Ի՛նչ, գոռացի ես սարսափելով, մի՞թէ
 դուք ծխում էք, Այբերտ:
 «Այոք է իմանաք, որ այն ժամանակ
 ես բոլորովին գլուս էի ծխոյ մարդ-
 կանցից: Ես միշտ գովում էի եղբօրս,
 որ կարողացել էր ազատ մնալ այդ
 զգուելի սովորութիւնից, և ամեն անգամ
 ասել էի, որ ինձ ամեն բան թոյլ կր
 տամ անելու, բայց կզգուեմ այն մար-
 դուն համբուրել, որի շրթունքները
 խայտառակ և դարչելի ծխախոտով կեղ-
 տոտուած են:
 Ես մինչ և այն ժամանակ չէի իմանում
 որ Այբերտը ծխում է, որովհետեւ նա
 իմ սենեակում չէր ծխել, և ուրիշ անգամ
 էլ առիթ չէի ունեցել նրա պակասու-
 թեան մտին տեղեկանալու:
 Իմ հարցի տօնը շփոթեց Այբերտին:
 — Այո, ես ծխում եմ, պատասխա-
 նեց նա քաշուելով, բայց ինչո՞ւ էք դուք
 դարմանում:
 — Այո, դարմանում եմ եւ այդ բանն
 ինձ օտարոտի է թւում. իմացէք, որ

ես չեմ ամուսնանայ այն մարդու հետ, որ ծխախոտը զնուժ է իբր բերանում: Այգպխսի մարդն իմ աչքում մի զգուելի արարած է:

Այբերտը սարսափած նայեց ինձ, ոչինչ չխօսեց և ծխախոտը կոխեց գրքւպանը: Նա մի քիչ էլ մնաց ինձ մօտ և վերջապէս ինձ ողջունելուց յետոյ դուրս գնաց:

Միւս օրը նա կրկին եկաւ ինձ մօտ և առանց մի որ և է առիթի ծխելու մասին խօսակցութիւն սկսեց և կատակելով ասաց, որ երէկ ինքը զարմացաւ և յոյս ունի, որ իբր թէ ես կ'աշխատեմ ընտելանալ նրա սովորութեանը, թոյլ կտամ իրան ծխելու և այլն: Բայց ես նրան շատ լուրջ կերպով ասացի և հասկացրի, որ ես չեմ կարող ծխող մարդկանց տեսնել և հաշտուել նրանց անտանելի սովորութեան հետ: Ընդհակառակն, ես սպասում եմ, որ ինձ սիրող մարդը թողնի իր ատելի սովորութիւնը և զրանով ինձ համար զսփառութիւն անէ:

Իմ վերջնական բացատրութիւնից յետոյ Այբերտը ծիծաղելի գրութեան մէջ ընկաւ: Նա բոլորովին տխրեց և մի քանի բողբոջեց յետոյ դուրս գնաց: Այն ժամանակից ի վեր նա ինձ հետ այլ ևս հաճելի խօսակցութիւն չէր ունենում, տխուր էր և շարունակ հառաչում էր: Նրա անտանելի գրութիւնը տեւեց մօտ մի շաբաթ: Այդ բանը ինձ սրտացաւութիւն էր պատճառում, բայց ես ոչ կարող էի և ոչ էլ ուզում էի նրան օգնել: Այբերտը կամ պէտք է իր ծիւղը թողնէր, կամ ինձանից վերջնականապէս հրաժարուէր: Երկուսից մէկը:

Մի օր եղբայրս ինձ մօտ եկաւ և դատապարտեց ինձ, իբր թէ ես յիմար բաներով եմ զրազուած: Բացի զբանից նա աւելացրեց, որ Այբերտը պատի վրայ ընկած ստուերի նման միշտ այս ու այն կողմն է ընկնում և չէ փոտահանում ինձ մօտ գալ: Եղբայրս աշխատում էր ինձ համոզել, որ ես թողնեմ յիմար սովորութիւնս և թոյլ տամ Այբերտին ծխելու, որովհետեւ նա շատ է աշխատել ծխելը

թողնել, բայց որովհետև նրա սովորութիւնը կամքի ոյժից աւելի գորեղ է եղել, դրա համար նա չէ կարողացել թողնել և կարող է հիւանդանալ: Այդ խօսքերը լսելուց յետոյ, ես չր կարողացայ համբերել և ասացի եզբօրս. «Աւրեան նա մի այնպիսի մարդ է, որ չէ կարող իր անտանելի եւ ծիծաղելի սովորութիւնը թողնել: Եթէ նա ինձ ճշմարիտ սիրում է, դրա համար գոնէ նա պէտք է իր ծիսելը թողնի, և այդ կարող է նրա սիրոյ համար մի գրաւական լինել:

Եզբայրս վրդովուեց, որովհետև ես նորից կրկնեցի այն բոլոր խօսքերը, ինչ որ ես առաջ Ալբերտին էի ասել: Ես ձեզ կը ձանձրացնեմ, եթէ իմ ճիշդ գէպքի մանրամասնութիւնների վրայ ելկար կանգ առնեմ: Բաւական է միայն ասել, որ վերջապէս Ալբերտը եկաւ ինձ մօտ և արտասունքը աչքերում խնդրեց, որ թոյլ տամ իրան ծիսելու: Ես էլ լաց եղայ և ասացի. — Գէ՛հ լաւ, ես ուզում եմ ցոյց տալ, որ ես աւելի եմ սիրում ձեզ, քան թէ դուք ինձ: Գուք իմ սիրոյ

համար չր կարողացար ձեր անտանելի սովորութիւնը թողնել, բայց որովհետև ես ձեզ աւելի ճշմարիտ եմ սիրում, դրա համար կ'աշխատեմ իմ հակակրօթեանը յաղթել:

Կարճ ժամանակից յետոյ մենք ամուսնացանք, և Ալբերտը շարունակեց առաջուայ նման ծիսել, բայց շնայելով դրան, ես Ալբերտի հետ երջանիկ կեանք էի վարում և բոլորովին մոռացել էի մեր կեանքի այն տիրուր շարաթնուայ մասին, երբ ես (զարմանալի է) նորից յիշեցի սեր անցեալ կռիւները:

Կէս տարի էր արդէն, որ մենք ամուսնացել էինք: Մի երեկոյ ես նկատեցի, որ Ալբերտը (ինչպէս առաջ սովորաբար անում էր) բնթրիքից յետոյ չը ծիսեց: Ես բոլորովին զարմացայ և կարծում էի, թէ նա միայն այդ երեկոն բացառութեամբ չը ծիսեց: Բարեբախտաբար այդ մի և նոյն երեկոյթը միւս օրն էլ նկատեցի: Ալբերտը երրորդ երեկոն էլ չը ծիսեց, և զարմանքս բազմապատկուեց. «Չը լինի թէ նա իր կնոջ համար է

ուզում ծխելը թողնել, մտածեցի եւ
բայց ինչո՞ւ նա այդ սկզբում չարեց,
երբ ես նրանից խնդրում էի»: Միր-
տքս յանկարծ սկսեց բարախել, և ինձ
թւում էր, թէ նա այժմ ինձ անկեղծ
սիրում է: (Սնդրեմ չը ծիծաղէք): Ես
ինձ մա՜հանացուների մէջ ամենաեր-
ջանիկն էի համարում: Ես երկար մտա-
ծեցի այդ բանի մասին և վերջապէս
զազանիքը իմացայ: Այրերտի ծխախո-
տի տուփը սեղանի վրայ ընկած էր,
իսկ նրա սաթից պատրաստած ծխա-
փողը զանազան թղթերի մէջ էր ընկել
(ծխափողը նա սովորաբար իր մօտ էր
պահում). ուրեմն կասկած չը կար, որ
Այրերտը ծխելը թողել էր:

Ես չըկարողացայ այլ ես երկար համ-
բերել և ցանկանում էի նրան երջան-
կութիւնս արտայայտել: «Այրերտ, ատա-
ցի նրան մի երեկոյ, դու կատարեալ
հրեշտակ ես, որովհետեւ քո ղէպի ինձ
տածած սիրոյ համար թողեցիր ծխելը
և ոչ մի դժգոհութիւն չարտայայտեցիր»:
Քրանից յետոյ ես զրկեցի և ոգևորուած

համբուրեցի նրան:

Բայց ես նորից զարմացայ, երբ նա
խոյս տուեց և աշխատեց ինձանից յազա-
տուել: Քիչ լռելուց յետոյ, վերջապէս
ասաց Այրերտը. «Տեսնում ես, սիրելիս,
որ ես ծխելը թողեցի, և այժմ ուզում
եմ քեզ գրա սատճառը բացատրել: Բնա-
ցած եղիք, որ ես ոչ թէ քեզ, այլ հայ-
րենիքս սիրելու համար եմ ծխելու թո-
ղել: Քեզ արդէն յայտնի կը լինի, որ
աւստրիական կառավարութիւնը մեր
երկրումն էլ է ծխախոտի մենավաճա-
րութիւն մտցրել: Մենք արդէն երզուել
ենք, որ իւրաքանչիւր հայրենասէր պէտք
է ծխելը թողնի, որպէս զի զբանով կա-
րողանանք մեր թշնամու եկամուտները
քչացնել: Այս բանը քեզ կարող է ծի-
ծաղելի թուել, բայց թշնամուն հարկա-
ւոր է ասեղով ծակել, երբ նրան չէ կա-
րելի սրով յաղթել»:

Այդ խօսքերը լսելուց յետոյ ես ան-
սովոր գրութեան մէջ ընկայ և աշխա-
տեցի գոնէ ցոյց տալ, որ խտալուհին
էլ խտալացուց պակաս հայրենասէր չէ


1002
5425

կարող լինել: Ես ներեցի Ալբերտին և
զովեցի նրա ազնիւ վարմունքը, որ ինձ
հերոսական էր թւում. «Ես ներում եմ
քեզ, որովհետև դու շատ ճիշտ ասացիր.
դու մինչև անգամ պարտաւոր ես հայ-
րենիցդ կնոջիցդ աւելի սիրելի և գերա-
դասելի»:

— Աւրեմն տեսնում է՞, վերջացրեց
իր պատմութիւնը արկին ֆօն Գ. և ժբւ-
տաւով դառնալով դէպի դօկտօրը, որ
խտալացու մէջն էլ հայրենասիրական
զգացմունքը սիրոյ զգացմունքից աւելի
զօրեղ է, որովհետև տարարին խտալա-
ցին հայրենիքի վերացական գաղափարի
համար զոհեց իր ծխախոտը, որի հետ
նա մտով և արիւնով կապուած էր:



Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page.



15
12

30

15

8

(1)

«Ազգային գրադարան»

NL0169632

